

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բնապահպանական կրթության

առանձնահատկությունները և նրա կազմակերպումը ՀՀ-ում

ԿԱՏԱՐՈՂ՝ Ք.Երևան հ. 120 հիմնական դպրոցի ուսուցչուհի

Ռամելա Բալոյան

ԴԱՍԱԽՈՍ՝ Աշոտ Խաչատրյան

ԵՐԵՎԱՆ 2022թ

Լեռնի անվան համար 65 դպրոց

Բովանդակություն

Ներածություն

1. Բնապահպանական կրթության առանձնահատկությունները
2. Բնություն. Նրա պահպանման առանձնահատկությունները և խնդիրները
3. Բնապահպանության կազմակերպումը ՀՀ-ում
4. Եզրկացություն

**<<Բնությունը կատակներ չի ճանաչում, նա միշտ արդարացի է
Մմիշտ լուրջ է, միշտ խիստ, նա միշտ ճշմարտացի է
Միսալները և մոլորությունները մարդկանցից են բխում>>**

Գյոթե

Ներածություն

Մարդը բնության գավակն է, ապրում է բնության մեջ և բնության միջոցներով: Այդ իսկ պատճառով բնության անաղարտությունը չի կարող չմտահոգել մարդկությանը: Մարդը իրողջկյանքի ընթացքում մշակում է և զարգացնում է բնության բարիքները՝ օգտվելով նրանցից: Ինչպես մարդու կյանքն է հարատև, այնպես էլ բնության կյանքը:

Մարդը գնալով արելի ու ավելի է թափանցում բնության գաղտնիքների մեջ, հայտնագործում է օրենքներն ու օրինաչափությունները և դրա շնորհիվ ստեղծում բազմապիսի նորանոր արժեքներ, որոնք թեթևացնում են նրա վիճակը, բարելավում կենսամակարդակը, զարգացնում են մտածելակերպը:

Մեր հանրապտության պայմաններում շրջակա միջավայրի պահպանության հարցերը առանձնապես հրատապ են: Դա պայմանավորված է հանրապետության սակավահողությամբ, ջրի պակասով, բնակչության մեծ խտությամբ, անտառային տարածությունների սահմանափակությամբ, արդյունաբերության այն ճյուղերի ինտենսիվ զարգացմամբ, որոնց ձեռնարկություններն իրենց արտադրության թափոններով ավելի են աղտոտում շրջական միջավայրը: Այդ իսկ պատճառով պետք է կարողանանք ոչ միայն կեղտոտու, այլև մաքրել մեզ շրջապատող տարածությունը: Մենք ենք այդ տարածությունների միակ գավանները:

Բնությունը մեզ շրջապատող նյութական աշխարհ է՝ օդը, ջուրը, հողը, լայնածավալ դշտերը, լեռներն ու օվկյանոսներ, բույսերն ու կենդանիները: Հարյուր հազարավոր սերունդներ են ապրել երկրագնդի վրա: Նրանք մշակել են դաշտերը, ընտելացրել վայրի կենդանիներ, աճեցրել բույսեր, սովորել օգտվել բնության բարիքներից, այն ծառայեցնել մարդու ծախերին: Բայց երբեմն էլ հակադրվել են բնությանը՝ կտրատել, ոչնչացրել են անտառները, նպաստել հողերի էրոզիային, ցամաքեցրել գետերը, ոչնչացրել վայրի կենդանիներին ու սպառել օգտակար

հանաձոները, կեղտոտել օդը, ջուրը և այլն:

Մարդը մեծ մասամբ բնությունից շատ է վերցրել նրան վերադարձնելով համարյա ոչինչ: Դրա հետևանքով բնությունն սկսել է աղքատանալ, նվազեցնել են նրա բնական պաշարները, սկսվել է հարնդհաբուխ դեգրադացիան:

Բնության պահպանության գործը լավ հիմքերի վրա դնելու համար մարդը լավ պետք է ճանաչի բնությունը, նրա օրինաչափությունները: Նախ պետք է կարողանա խնայողաբար օգտագործել նրա բարիքները, կարողանա գիտականորեն մոտենալ այդ հարցին, քանի որ ամեն գիտություն սովորեցնում է առաջնորդվել նրանով: Բնության պահպանությունը կրթության համակարգում համարյա աստ քիչ տեղ է գրավում: Սակայն այսօր այդ հարցը մասամբ լուծված է: Բնությունը նման է մանուկի, որին խնամք է հարկավոր: Բավականին ուշադիր և խելացի:

<<Բնությունը դա մի հիրք է, որը պետք է կարողնել կարդալ և ճիշտ հասկանալ: Նրան սխալ հասկանալը մեծ վնաս է բերում>>

Մ. Նալբանդյան

1.Բնապահպանության առարկան և առանձնահատկություններ

Մարդու շփումը բնության հետ, որը մշտապես անհրաժեշտ է նրա գոյության համար, բառիս ընդհանուր իմաստով էլ հենց բնօգտագործումն է: Մարդու կյանքի և գոյության հիմքում ընկած է բնօգտագործումը: Այդ պատճառով պատմականորեն և փաստացի բնօգտագործումը կազմում է հասարակական կյանքի հիմքը, հասարակության և բնության փոխհարաբերություններում բազիսը:

Շրջակա միջավայրի պահպանության շրջանակներում գնահատելով բնօգտագործման նշանակությունը՝ հարկ է նկատի ունենալ, որ այն խառայում է ոչ միշտ մարդու ամենաբազմազան պահանջմունքների բավարարման և կյանքի պահպանման համար, բայց և միաժամանակ հանդիսանում է բնության վրա առավել վնասակար ազդեցության գործոն: Մարդու կողմից բնական ռեսուրսների օգտագործումը իր կյանքի համար որոշ չափով կարգավորվում է իրավունքով: Բնական հարստությունների օգտագործումը կարգավորողներին համակարգը կոչվում է բնօգտագործման իրավունք: Այդպիսի նորմերը գտնվում են գլխավորապես բնառեսուրսային օրենսդրությունում՝ հողային, ջրային, լեռնահանքային, անտառային, ֆունիստական: Բնօգտագործմանը վերաբերող որոշ դրույթներ նախատեսված են (<<Շրջակա միջավայրի պահպանության>> օրենքում) Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրական հիմունքներում, Շրջակամիջավայրի

ազդեցության փորձաքննության մասին օրենքում. Քաղաքացիական, քրեական, վարչական և այլ օրենսդրություններում: Բնագիտության և բնության մասին գիտությունների համակարի, որի պատմականորեն համակարգը, սահմանազատվե է մարդկային հասարակության ու մտածողության մասին եղած գիտություններից և ձեռք է բերել հարաբերական ինքնուրույնություն:

Բնագիտության խնդիրն է բացահայտել բնության մեջ գործող օրինաչափությունները և պրակտիկ կյանքում նրանց կիրառման հնարավորությունները: Բնագիտության առարկան օրգանական և անօրգանական մատերիայի շարժման տարբեր ձևերն են, նրանց փոխադարձ կապերն ու անցումները: Բնագիտության համակարգի գիտությունները խմբավորվում են հետևյալ կերպ՝

1. ֆիզիկա, քիմիա, ֆիզիկական քիմիա
2. երկրաբանություն, հանքաբանություն, մթնոլորտաբանություն, աշխարհագրություն
3. աստղագիտություն
4. կենսաբանություն, բուսաբանություն, կենդանաբանություն
5. անատոմիա, ֆիզիոլոգիա, ուսմունք մարդու ծագման ու զարգացման մասին, ուսմունք ժառանգության մասին:

Առարկայի բնույթին համապատասխան, բնագիտության տարբեր բաժիններ կիրառում են ուսումնասիրության ուրույն մեթոդներ: Բնագիտությունը սերտ կապի մեջ է մարդկային հոգևոր և նյութական մշակույթի այլ բնագավառների հետ: Բնության օրենքների պրակտիկ կիրառման և տեխնիկայի միջոցով բնագիտությունը կապվում է արտադրության, գյուղատնտեսության, առողջապահության, հաղորդակցության ու կապի միջոցների հետ:

Հատկապես իր տեսական մասով՝ կատեգորյալ ապարատով, օրենքներով, տեսություններով ու հիպոթեզներով բնագիտությունը անմիջականորեն մասնակցում է աշխարհի գիտական պատկերի ստեղծմանը, հետազոտության ձևերի ու մեթոդների մշակմանը: Սրանով բնագիտությունը առնչվում է փիլիսոփայության հետ, ազդում նրա զարգացման ընթացքին և ուղղությանը: Այսինքն ինչպես փիլիսոփայությունն է գիտություն Գոյի մասին, այնպես էլ բնագիտությունը գիտություն է բնության, մարդկության, հասարակության և նրան շրջապատող երևույթների մասին՝ Գոյի: Ինչպես փիլիսոփայությունն է կապված բոլոր գիտությունների հետ, այնպես էլ բնագիտությունը կապված է մի շարք գիտությունների հետ, որոնք ուսումնասիրում են բնության մեջ կատարվող երևույթները, իրադարձությունները: Օրինակ՝ բուսաբանություն, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, իրավագիտություն, պատմություն, անատոմիա, ֆիզիոլոգիա և այլն: Այս բոլոր գիտություններն էլ իրենց մեջ ներառում են բնագիտության ուսումնասիրությունը:

Բնագիտության զարգացման ազդակները վերջին հաշվով պայմանավորված են մարդկային պրակտիկ պահանջմունքներով:

Բնության մասին առաջին գիտելիքները ծագել են դեռևս Հին Արևելքում: Դրանք իմաստավորվել և գիտական համակարգի մեջ են ներառվել Հին Հունաստանում:

Հույն բնագետները՝ «բնափիլիսոփաները» որպես ուսումնասիրման առարկա բերցրել են բնությունը իր միասնության մեջ և աշխատել առանց փորձնական ուսումնասիրության, զուտ մտահայեցողական ճանապարհով նշել բացարձակ հիմքեր, որոնցով հնարավոր լիներ բացատրել ողջ աշխարհը: Դեռ վաղ ժամանակներից որպես գիտություն բնագիտությունը ուսումնասիրվել է որպես զուտ մարդու կողմից օգտագործվող պայման: Գիտականորեն չեն մշակվել բնության առանձնահատկությունները, նրա պահպանման օրինաչափությունները: Այսինքն պրակտիկորեն այն ուսումնասիրվել է, բայց գիտականորեն ոչ:

Արդի իմաստով բնագիտությունը սկիզբ է առնում նոր ժամանակներից, երբ բնության անմիջական հայեցումից անցում է կատարվում դեպի նրա անալիտիկ մասնատումը: Այսինքն, երբ առաջ են գալիս գիտական համալիրներ, որտեղ լիովին ուսումնասիրվում է տվյալ առարկան կրթության համակարգում: Ինչպես մնացած բոլոր գիտությունները, բնագիտությունը նույնպես ունի բաականին շատ մասնագետներ, որոնց աշխատությունները մինչև այսօր մեծ դեր են կատարում այդ գիտության զարգացման և մշակման համար: Նրանց ուսումնասիրությունները բավականին մեծ նշանակություն ունեն բնության պահպանության հարցում: Որը կարևոր է մեր կյանքի շարունակության համար: Բնության պահպանության հարցը միշտել ունեցել է տարաձայնություններ տարբեր գիտնականների կողմից: Սակայն այսօր այդ իր ուրույն տեղն է գտել գիտությունների մեջ:

2. Բնություն. Նրա պահպանման առանձնահատկությունները և խնդիրները

Բնություն, առավել լայն իմաստով՝ գոյություն ունեցող ամեն ինչ իր բազմազան դրսևվորումներով: Այդ իմաստով բնության հասկացությունը համընկնում է Տիեզերքի, ընդհանուր առմամ նաև մատերիա, կեցություն օբեկտիվ ռեալության հասկացողությունների հետ: Տարբերում ենք անօրգանական և օրգանական բնություն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կառուցվածքային տարբեր մակարդակները: Բնությունը գտնվում է մշտական շարժման ու զարգացման մեջ: Բնության մեջ հայտնի մասում նրա զարգացման բարձրագույն աստիճանը հասարակությունն է: Իսկ հասարակությունը կազմում է մարդը:

Մարդկային հասարակության զարգացման պատմությունը մի որոշ առումով ներկայացնում է իբրև բնության նկատմամբ մարդու հարաբերության պատմություն: Մարդը և բնությունը սերտ կապի մեջ են գտնվում ողջ կյանքի և գործունեության ընթացքում:

Բնության պահպանության միջոցառումներից են՝ բնական հարստությունների օգտագործման ընդհանուր կարգավորումը, ջրամբարների և օդի պահպանումը աղտոտվածությունից, կենդանիների և բույսերի տեսակների քանակական կարգավորումը, ազգային պարկերի ստեղծումը և բնության առանձին հուշարձանների պահպանումը (կենդանի և անկենդան):

**<<Մի ոչնչացրու, մի պոկի, մի տրորի, մի փչացրու:
Պահպանիր, թույլ տուր աճել, և դու ավելի հարուստ
կլինես ոչ միայն ծաղիկներով, այլև հոգով>>**

Բնական ռեսուրսների ճիշտ օգտագործման և բնության պահպանության պրոբլեմը ճիշտ ըմբռնելու համար միշտ պետք է ելնել բնության դիալեկտիկայի հիմունքներից, պետք է իմանալ, որ բնության բոլոր երևույթները գտնվում են փոդադարձ կապի և փոխադարձ պայմանավորվածության մեջ:

Բնության պահպանության մեթոդոլոգիայի հիմքը բնության և հասարակության երևույթների համընդհանուր փոխադարձ կապն ու պայմանավորվածությունն է:

Բնության պահպանությունը և նրա օգտագործումը ճիշտ կազմակերպելու համար ամենայն խորությամբ ըմբռնել բնության երևույթների փոխադարձ կապը, ճիշտ ու խելացի հարաբերություն ստեղծել մարդու և բնության միջև, ճիշտ գիտելիքներ հաղորդել մարդկանց բնության պահպանման մասին:

Ներկայումս երբ մեծացել են տեխնիկական հնարավորությունները և բնական հարստությունների շահագործման մասշտաբները, բնության վրա չմտածված ներգործության անսպասելի հետևանքները կրնակալոխ հետևում են մարդուն և կարծես վրեժ առնում նրանցից:

Բնության պահպանության պրոբլեմը նոր չէ: Դեռևս նախնադարյան մարդիք, զգալով, որոշ կենդանիներ շատ որսալու հետևանքով աստիճանաբար նվազում են, կամ օգտագործվող բույսերը հետզհետե պակասում են, ձեռք էին առնում անհրաժեշտ միջոցներ ու այդ ճանապարհով նպաստում բնության ռեսուրսների մասնակի պահպանմանը: Այդ իսկ պատճառով այսօր նվազել է որսորդությունը, դեղաբույսերի ոչնչացումը, այսինքն բնության պահպանման օրենքները ազդում են մարդկության վրա:

Բնության պահպանության հարցը դարեր շարունակ հուզել է մարդկությանը: Մակայն այսօր այդ հարցը լուծվում է մի շարք գիտահետազոտական ինստիտուտների միջոցով: Մեր հանրապետությունում գործում են տարբեր հիմնարկություններ և կազմակերպություններ, որոնք պայքարում են բնության աղտոտման դեմ:

Մեր բուհերում զարգացել է բնապահպանության առարկայի ուսումնասիրությունը, որը մեծ դեր է կատարում մեր ներկա կյանքի համար: Ուրախալի փստ է, որ մեր այսօրվա սերունդը հոգ է տանում բնության պահպանման համար, ուսումնասիրում նրա պահպանման առանձնահատկությունները: Կրթության համակարգում որպես առանձին առարկայի ուսումնասիրություն այն շատ կարևոր է: Քանի որ չիմանալ մեզ շրջապատող բնության երևույթների, նրանց օգտագործման և պահպանման մասին օրենքները և առանձնահատկությունները մենք չենք կարող լիարժեք գիտելիքներ ստանալ, և լիովին ապահովել նրա պահպանման հարցը: Ունենք էկոլոգիայի ամբիոն, որը նույնպես տարեկան բաց է թողնում բազմաթիվ մասնագետներ:

Աշխարհի զարգացած երկրները՝ գիտատեճնիկական նվաճումների շնորհիվ, ունեն բարձր զարգացած արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, էներգետիկա, որոնք հանդիսանում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հիմնական և հզոր գործոն: Ուրբանիզացիայի գործընթացը այդ պետություններում միշտ էլ շատ ինտենսիվ է եղել: Արդյունքում 60-ական թթ-ի վերջին դրանցից շատերում շրջակա միջավայրի վիճակը գնահատվում է ճգնաժամային: Էկոճգնաժամն արտահայտվեց առաջին հերթին մեծ մասշտաբի աղտոտումներով: Այստեղից էլ եղավ այն բանի գիտակցումը, որ շրջակա միջավայրի աղտոտումը ոչ միայնվնասում է մարդկանց, այլև արգելակոխ է տնտեսության ազրգացում: Զարգացած երկրների մեծամասնությունում էկոճգնաժամի առաջ գալուն հետևած հատուկետ պատասխան ռեակցիաներն հետևեցին էկոպրոբլեմների լուծման առավել ինտենսիվ, նպատակաուղղված և

կոմպլեքսային միջոցառումներ: Այդ երկրներում բնության ետաճի ռեկցիան եղավ շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրության համակարգի ստեղծումը: Միաժամանակ դրանցում ստեղծվում էին պետական կառույցներ, որոնք կոչված էին պահպանել ստեղծված օրենսդրությունը: Այս երկրներում բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության աղբյուրների թվին են պատկանում սահմանադրությունները, օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, դատարանի որոշումները: Սահմանադրությունները ձևավորվում են բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հիմքերը: Բայց առավել կարևոր և արդյունավետ են օրենսդրությունները: Չարգացած երկրների տվյալ ոլորտի համապատասխան օրենսդրությունը մշակվել է շուրջ 30 տարիների ընթացքում:

Ինչպես ասացինք բնության մեջ մտնում են մեզ շրջապատող ամեն ինչ, ապա ուսումնասիրենք նրանց յուրաքանչյուրի պահպանման ձևերն ու առանձնահատկությունները:

Անտառ

Անտառը հողապաշտպան ու ջրապաշտպան մեծ նշանակություն ունի, որը որոշում է ոչ միայն երկրի գյուղատնտեսության, այլ ողջ ժողովրդական տնտեսության բախտը: Անտառը պայքարում է փոշու դեմ, մեղմացնում է քաղաքների ու արդյունաբերական կենտրոնների աղմուկը. Անսահման են անտառի բարիքները: Անտառն ու կանաչ տարածություններն ավելի մեծ նշանակություն ունեն մարդկանց ու կենդանական աշխարհի համար:

Հանրապետության անտառային տնտեսության պետական կոմիտեյի ջանքերով մինչև այժմ տնկված են մոտ 75 հազար հեկտար նոր տնկիներ: Մեր լեռնային անտառներն իրենց արտակարգ կարևոր պաշտպանական նշանակության շնորհիվ համարվում են առաջին կարգի անտառներ:

Անտառն ու կանաչ բուսականությունը, այդ թվում նաև այգիները պահպանելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել անտառային շրջաններում եղած արդյունաբերական ձեռնարկությունների կողմից արտադրված թունավոր գազերի, ծխի, փոշու վերացման համար պահանջվող միջոցառումների, օդը մաքրող սարքավորումներ կառուցելու գործի արագացման համար:

Սակայն այսօրվա ծանր պայմանները ոչնչոցնում են մեր անտառները: Անտառները բոլորովին վառելիքի հումք: Մեր հիմնական տուրիզմի զարգացման գեղեցկության միակ վայրերը այսօր ոչնչոցվում են: ԵՎ ցավալին այն է, որ դրանց կանխման համար չեն գործադրվում ոչ մի միջոցներ: Եթե փորձենք այդ հարցին մոտենալ գիտականորեն, ապա կհասկանանք, որ կատարվում է հանցագործություն, որը չի պատժվում օրենքի համաձայն: Այն օրենքի, որը երևի թե չի գործում:

Այն անտառները, որոնք լի են եղել տարբեր տեսակի ծառերով այսօր <<տկլոր>> պատկեր ունեն: Եթե նախկինում մենք պարծենում էինք մեր Ծաղկաձորի գեղատեսիլ անտառային վայրով, և ոչ միայն մենք այլ տարբեր երկրներիցմեզ այցի եկած տուրիստները, ապա այսօր միայն կարող ենք տխուր տեսարանի ականատես լինել: Ծաղկաձորը դառնել է միայն հյուրանոցային համալիրների, ռեստորանների վայր: Սա է այսօրվա մեր բնության իրական պատկերը:

Անտառների պաշտպանության գործը բարձր հիմքի վրա դնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել անտառապաշտպանության միջոցառումների ամբողջական հմակարգ: Ստեղծել հատուկ համակարգեր, որոնք կպայքարեն անտառների ոչնչացման դեմ:

Հող

Բերք ու բարիք տվող հողը անգնահատելի գանձ է: Հողը երկրագնդի վերին շերտի այն մասն է, որտեղ կանաչ բույսերի օգնությամբ կուտակվում է օրգանական նյութ, որը իրենից ներկայացնում է արևի էներգիայի կոնցենտրատ: Հողային ծածկոցը երկրագնդի վերին այն շերտն է, որը կլանում է արևի էներգիան, կուտակում ու տրամադրում է մարդկությանը:

Հողի էրոզիայի դեմ պայքարելու համար գործադրվող բոլոր միջոցառումները հիմնական նպատակ է վերացնել հոսող ջրի ու անձրևների մակերեսային հոսքը, պայմաններ ստեղծել, որ ամբողջ ջուրը ներծծվի հողի մեջ, որը ոչ միայն կանխում է հողի քայքայումը, այլև հարստացնում է հողի մեջ եղած խոնավությունը, նպաստում բուսականության ավելի փարթամ զարգացմանը: Հողային ռեսուրսների՝ ժողովրդի նյութական բարեկեցության անսպառ աղբյուրների պահպանության ու իմացողաբար օգտագործման խնդիրը, պահանջում է ավելի մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր կտոր հողի խելացի մշակմանն ու նրա բերիության բարձրացմանը:

Հողը մեզ տալիս է տարբեր բարիքներ, որոնք մենք օգտագործում ենք մեր առօրյա կյանքում:

Ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ արդյունաբերության ոլորտում հողը մեր մեծ գանձերի խորհրդանիշն է: Հողից մենք ստանում ենք վառելիքաէներգետիկ արդյունաբերություն, նավթաարդյունաբերություն և այլն: Ունենք նաև մետալուրգիական, գունավոր մետալուրգիայի ձեռնարկություններ, որոնք իրենց հումքը ստանում են հողից:

Հողը մեծ նշանակություն ունի նաև գյուղատնտեսության զարգացման ոլորտում: Այսօր մշակվում են բավականին հողի տարածքներ, որից մարդիկ ստանում են տնտեսական մթերքներ, որոնք օգտագործում են առօրյա կյանքում: Սակայն հողի մշակման համար պահանջվում է հատուկ գիտելիքների իմացություն:

Առաջին հերթին հողագործները պետք է լավ իմանան բնության պահպանման, մշակման օրենքները և հետո միայն զբաղվեն նրանով: Այսօր բավականին զարգացած տեխնիկայի լճացումը նպաստում է հողի մշակման ճիշտ օգտագործմանը:

Դարերից ի վեր հողը մենք մշակել ենք և ստացել նրանից տարբեր տեսակի օգուտներ: Սակայն նաև եղել ենք պատճառ, նրա ենթարկվելու էրոզիայի: Այսինքն օգտագործելով տարբեր տեսակի պայթուցիկ նյութեր, թունավոր հումքեր, մենք վնասում ենք հողը, վնասում ենք մարդու կյանքը: Քանի որ հողից ենք ստանում այն ամենը ինչը օգտագործում ենք առօրյա կենցաղում:

Հողատարածքներում անց են կացված երկաթուղային գծեր, ճանապարհներ, հոսանքի, գազի կոմունիկացիոն գծեր և այլն, որոնք օժանդակել են մարդկանց բնակեցման համար բարենպաստ պայմաններում ստեղծմանը, նոր տարածքների յուրացման հետ միասին մարդը ստիպված է լինում նաև պայքարել բնության տարերքների դեմ: Քանի որ հաճախ լինում են փոթորիկներ, ջրհեղեղներ երկրաշարժեր և այլ վնասակար երևույթներ, որոնք հողի փչացման հետ միասին վնասում են նաև շինություններին, կոմունիկացիոն գծերին և այլն:

<<Հողը սնում է մեզ, մենք պետք է սնենք նրան>>

Այո, հողը մեզ սնում է, սկայն մենք ոչ միշտ ենք կարողանում նրան ապահովել լիարժեք սնունդով: Այսօր բավականին հողատարածքներում կարելի է հանդիպել աղբի մեծ կույտեր, թափոններ, որոնք վնասում են հողի բարիքների էկոլոգիապես մաքուր լինելուն:

Կենդանիներ, թռչուններ, միջատներ, ձկներ

Կենդանիների գոյությունը սերտ կերպով կապված է երկրագնդի վրա նյութի ու էներգիայի շրջանառության հետ: Մեծ հարստություն են ձկները, ջրային այլ կենդանիները, թռչունները, որոնք ոչ միայն արժեքավոր մթերք և հումք են տալիս այլև վայրի գազանների հետ միասին զարդարում են մեր բնությունը:

Գազանների ու թռչունների, ջրային կենդանիների ու բուսականության տեղափոխման ու կլիմայավարժեցման պրակտիկան հայտնի է մարդկությանը դեռևս հին դարերից: Այդ պրակտիկան մեծ մասամբ տվել է և շարունակում է տալ արժեքավոր արդյունքներ: Դեռ նախնադարյան համակարգերից կենդանիները հանդես են եկել միայն որպես արժեքավոր մթերք, գոյատևման միջոց: Մեր նախնիները ոչնչացնելով կենդանիներին, թռչուններին, ձկներին միայն մտածել են իրենց առօրյա գոյատևման մասին: Իսկ որպես բնության արժեքավոր զարդ նրանք գիտելիքներ են ստեղծել միայն մեր դարաշրջանի սկզբում: Այդ իսկ պատճառով

դեռ այն ժամանակաշրջաններից ոչնչացվել են մեծ քանակությամբ արժեքավոր և յուրահատուկ շատ կենդանիներ, թռչուններ, միջատներ, ձկներ և այլն:

Սակայն այսօր նրանց ոչնչացումը հնարավոր չի կանխել: Մարդ արարածն իր բնույթով անխնա տեր է բնության համար:

Ըստ գիտնականների տվյալների մեր մոլորակի վրա ապրող կենդանիների, թռչունների, ձկներն թիվն ավելի մեծ է , քան աստղերի թիվը, սակայն դա այդպես չէ, իրականում շատ տեսակներ վերանում են աղետալի արագությամբ:

Մեր միակ հարստությունների պահպանման համար ստեղծվեց կենդանաբանական այգին, որը պահպանում է յուրահատուկ կենդանիների, թռչունների, ջրային կենդանիների նմուշները: Սակայն նորից ելնելով կենցաղային պայմաններից այսօր նրանց պահպանման հարցը լուրջ պրոբլեմների առաջ է կանգնում:

Ինչպես բնության յուրաքանչյուր բան այնպես էլ կենդանիները օգտակար են մարդկության կյանքի համար: Այսինքն նրանց կյանքի, տնտեսության զարգացման, մշակույթի բարձրացման համար:

Մենք պետք է պայքարենք նրանց ոչնչացման դեմ: Այսօր մենք շատ ենք հանդիպում այնպիսի անձանց որոնք անխնա ոչնչացնում են կենդանիներին, ձկներին, միջատներին, որոնք ևս մեծ օգուտ են տալիս մեր գյուղատնտեսության ոլորտում: Պետք է կանխենք անօրինական որսորդությունը: Չե որ կենդանիները բնության ամենամեծ հարստությունն են ներկայանում:

Մթնոլորտ

Մթնոլորտը երկնագոյի արտաքին շերտն է: Նրա զանգվածը չնչին է, կազմում է երկրի ընդհանուր զանգվածի մեկ միլիոներորդական մասը: Բնական բոլոր պրոցեսներում մթնոլորտի դերը չափազանց մեծ է:

Մթնոլորտի աղտոտումը հիմնականում անտրոպոգեն բնույթ ունի: Մթնոլորտային աղտոտում ասելով հասկանում ենք մարդու գործունեության հետևանքով զանազան գազերի, կարծր կամ հեղուկ նյութերի, գոլորշիների ներթափանցումը մթնոլորտ, որոնք մեծացնում են նյութերի խորության բնականոն ֆոնը և անբարենպաստ, հաճախ աղետալի ազդեցություն ունենում կենդանի օրգանիզմների վրա:

Մթնոլորտը իրենից ներկայացնում է տարբեր գազերի խաբնուրդ:

Մթնոլորտի կազմի բացասական փոփոխությունները պայմանավորված են հիմնականում վերջինիս երկրորդական բաղադրիչների խորության խախտմամբ: Մթնոլորտի աղտոտման պատճառ կարող են լինել բնական երևույթները՝ հրաբխի ժայթքումը, անտառային հրդեհները և այլն:

Մթնոլորտի աղտոտմամբ պայմանավորված հիվանդություններից տարեկան աշխարհում մահանում են 2,7 միլիոն մարդ:

Հայաստանում մթնոլորտն աղտոտող առավել տարածված նյութերն են փոշին, ծծմբական գազը, ածխածնի օքսիդը, ազոտի օքսիդը, ֆորմալդեհիդը, բենզոլը, քլորը, ածխաջրածինը:

Այսօր գործում են այնպիսի ձեռնարկություններ, որոնք արտահանում են կեղտոտ գազեր և աղտոտում են մթնոլորտը: Աղտոտման մեջ մեծ դեր ունեն նաև ավտոմեքենաների գազերի արտահանումը, մի շարք քիմիական գործարանների թունավոր նյութերի արտադրումը: Վերջինս օրինակ նախկինում գործող <<Նաիրիտ>> գործարանը, որը արտահանում էր թունավոր նյութ և վնասում էր մարդու կյանքը: Այդ գործարանում աշխատող շատ մարդիկ ունեին տարբեր տեսակի հիվանդություններ, բայց քանի որ ապրելաձևի ուրիշ իջոց չկար շարունակում էին աշատել: Չնայաչ <<Նաիրիտ>>-ը եղել է մեծ հարստության քսակ:

Այս բոլորը նպաստում են մարդկային կյանքի կրճատմանը:

Այսօր մենք խոսում ենք մթնոլորտի մաքրման մասին, սակայն ինքներս այն աղտոտում ենք: Չունենալով այնպիսի կազմակերպություններ, որոնք կարող են զբաղվել այդ հարցի կանխման վերաբերյալ, մենք շատ վնասներ ենք ունենում թե՛ գյուղատնտեսության, թե՛ կոլտնտեսության, թե՛ մարդկության կյանքում:

Այս տեժինիկական արձր զարգացած պայմաններում պետք է, որ ստեղծենք այնպիսի սարքեր, որոնք կկարողանան կանխել այդ վնասը: Եվ արդեն կան նախադրյալներ այդ հարցի շուրջ:

Բնապահպանության առաջին հարցերից է հենց մթնոլորտի մաքրումը, այսինքն աղտոտման կանխումը:

Ջուր

**<<Ջուր... դու որ միայն անհրաժեշտ ես կյանքի համար,
Դու ինքը՝ կյանք ես, աշխարհի մեծագույն հայտարարությունը>>
Անտուան դը Սենթ- Էկզուպերի**

Կյանք և ջուր բառերը գրեթե հոմանիշներ են: Առանց ջրի Երկրի վրա անհնարին է ոչ միայն մարդու, այն ցանկացած օրգանիզմի գոյությունը:

Կենսագործունեության համար ջրի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ թե բույսերի, թե կենդանիների բջիջները մեծ քանակությամբ ջուր են պարունակում:

Ջուրը ֆոտոսինթեզի արդյունքում մթնոլորտում թթվածնի գոյացման միակ աղբյուրն է: Այն ամենատարածված քիմիական միացություններից է:

Եթե առանց հացի մարդ կարող է ապրել ինչ-որ ժամանակ, ապա ջրի պակասը բերում է ինքնասպանության: Ջուրը մարդու առաջին սնունդն է: Ջրագուլած մարդու օրգանիզմը հավասար է <<մեռած>> մարմնի: Մակայն այսօր ջրի աղտոտման հարցը ևս շատ են հուզում մեր գիտնականներին: Կեղտաջրերի ստեղծումից այսօր բնակչությունը ունենում է տարբեր տեսակի հիվանդություններ, որոնք բերում են նաև մահացության դեպքերի: Ջրի աղտոտման հիմք են հանդիսանում մեր օրերում ստեղծված տնտեսական պայմանների վաթաթարացումը, այսինքն այսօր մեր կոյուղիները ունեն մեծ պրոբլեմներ, անսարքության մեծ վնասներ: Իսկ դրանց վերականգնման համար հարկավոր են միջոցներ, որը բացակայում է Հայաստանի Հանրապետությունում:

Մակայն ունենք ջրամբարներ, որտեղ ջուրը ենթարկվում է պրոֆիլակտիկական մեծ աշխատանքների՝ մաքրման, բայց այդ ու հանդերձ այդ աշխատանքները լիովին չեն բավարարում ջրի մաքրմանը:

Եթե մենք այսօր նայենք մեր գետերի առուների և ջրամբարներիմեջ ապա մեծ քանակության աղբ ու կեղտ կտեսնենք: Այսօր դժվար է հասնել այն բանին, որ մարդ կարողանա հասկանա, որ աղբի համար նախատեսված են հատուկ աղբարկղեր, աղբանոցներ, և որ իրենց այդ տեսակի անտարբերությունը բնության վերաբերյալ բերում է շատ պրոբլեմների առաջացում: Այսինքն կրճատվում է մարդու կյանքը, ոչնչանում է բնությունը, ոչնչանում են կենդանիները և մեզ շրջապատող իրականությունը:

**<<Կյանքում ամենաանհրաժեշտ բանը ջուրն է
Բայց այն հեշտ է փչացնել>>
Պլատոն**

Ջրով են լցված գետերը, լճերը, ծովերն ու ովկիաոսները: Ջուրը մեր մեծ քարիքներից մեկն է հանդիսանում:

ՀՀ-ում ջրի պակասությունը շատ է: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանը ինքը քարերի ու լեռների աշխարհ է: Մակայն մենք ունենք Հրազդան, Արփա, Սևան, որոնք մեծ հարստություն են մեր կյանքի թե տնտեսության և թե հասարակական զարգացման համար:

Սևանա լիճը մեր ամենամեծ հարստություններից է, որը մեծ դեր և նշանակություն ունի տուրիզմի, տնտեսության, կյանքի զարգացման հասար: Մակայն այսօր նրա մակերեսը բավականին իջող է: Դա պայմանավորված է մեծ էներգոհամակարգի կառուցման հետ:

Ներկայումս ժողտնտեսությանցանկացած ճյուղում և տնտեսության մեջ չի կարելի գտնել որևէ կետ, որտեղ չօգտագործվի էլեկտրականությունը:

Այն մեծ չափով թափանցել է կենցաղ և արդյունաբերության բոլոր ճյուղերը:

Տեխնիկայի զարգացման գուզրնթաց ստեղծվել են հզոր ջերմաէլեկտրակայաններ (ՋԵԿ)-եր, որոնցից են Հրազդանի ՋԵԿ-ը, որի հզորությունը կազմում է 800 հազար կիլովատ/ժամի, Երևանի ՋԵԿ-ը և այլն: Ջերմաէլեկտրակայանների առավել հեռանկարային ենթաճյուղը համարվում է ատոմային էլեկտրոկայանները: ՀՀ-յան մեջ նույնպես ստեղծված է հիդրոէլեկտրակայանների կասկադներ, որոնցից են Սևանա-Հրազդան, Տաթև և այլն: Կոնկրետ Սևան-Հրազդան կասկադի վրա գործում են մի շարք հիդրոկայաններ, ոոնցից են Սևանի, Աթարբեկյանի, Գյումուշի Արզնու, Քանաքեռի և Երևանի հիդրոկայանները: Ատոմային էլեկտրաէներգետիկական տնտեսության զարգացմանը մեծ նշանակություն ունի ընդհանուր էներգատնտեսության ասպարեզում: Այս ամենը կարևոր դեր ունեն մարդու կյանքում, սակայն ունեն նաև բավականին թերություններ: Այստեղ միակ թերությունը կարելի է համարել թափոնների վնասազերծումը, որը իրականացվում է գետնի տակ կամ օվկիանոսի հատակներում: Ինչը մեծ վնասներ է հասցնում մեր գետերին, լճերին և ջրամբարներին: Այս բոլորը նպաստում են ջրի պակասեցմանը, աղտոտմանը: Մի կողմից այն պետք է մարդկության կյանքին, բայց մի կողմից էլ նրանք վնաս են նրանց կյանքի համար, արտահանելով մեծ չափերի թունավոր թափոններ:

Արդյունաբերական կամ կենցաղային նպատակներով օգտագործվելուց հետո ջուրը, բնականաբար, աղտոտվում է: Բարեբախտաբար ջուրն ունակ է ինքնամաքրման: Եվ դա մեծ նպատակ է հանդիսանում մեր կյանքում:

Ջրի աղտոտումը կապված է նաև մեծ քանակությամբ կեղտոտ անձրևների տեղումներից: Այդ անձրևները իհայտ են գալիս բազմապիսի թունավոր թափոններից:

Ջուրը կյանք է, բայց ջրին էլ կյանք է անհրաժեշտ: Այդ կյանքը մեզանից է կախված:

Երբ այսօր մենք խմում ենք ջուրը, մենք չպետք է մոռանանք նրա պահպանման ու մաքրման մասին: Չէ որ նրա մաքրությունից է կախված մեր կյանքը: Մնք որմիայն պետք է պահպանենք ջուրը աղտոտումից, այլև պետք է խնայողաբար օգտագործենք այն, ամեն անիմասր ջրի կորուստը բերում է ջրի պակասեցմանը:

3. Բնապահպանության կազմակերպումը ՀՀ-ում

1978թ. Հայկական ՍՍՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում ասված է. «Ելնելով ներկա և ապագա սերունդների շահերից, ՍՍՀՄ-ում միջոցներ են ձեռնարկվում հողի ու նրա ընդերքի, ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական աշխարհի պահպանման ու գիտականորեն հիմնավորված, ռացիոնալ օգտագործման համար, օդի և ջրի մաքրության պահպանման, բնական հարստությունների վերարտադրման ապահովման և մարդու շրջակա միջավայրի բարելավման համար»:

Բնությունը աղտոտումից պահպանելու ուղղությամբ առաջին լուրջ քայլը 1949թ հունիսի 28-ի ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ արդյունաբերական ձեռնարկությունների ղեկավարների վրա պարտականություն է դրվել կազմելու պլան և նշելու միջեցառումներ օդային միջավայրի աղտոտման դե պայքարելու համար: Հանրապետության գերագույն սովետը 1958թ. Մայիսի 14-ին ընդունել է բնության պահպանության մասին օրենքը, 1973թ. Հաստատվել է ՀՍՍՀ ջրային օրենսգիրքը և այլն:

Սակայն հատուկ մասնագիտական հմտություններ և գրքեր պետք չէ կարդալ համոզվելու համար, թե ինչպիսի «ռելսերի» վրա էր դրված բնօգտագործումը, դրա պետական կառավարումը և օրենսդրական դաշտը ԽՍՀՄ-ի տարիներին Հայաստանում: Այդ ժամանակներում ամենակարևորը արտադրական պլաններն էին, նոր ցուցանիշների նվաճումները, հնգամյակների գերակատարումը, քիմիական արդյունաբերության արագ զարգացումը և բնօգտագործումն ու բնապահպանությունը ենթարկվում էին կուսակցության և կառավարության նշած այս «սուրբ» նպատակին: Սովետական տարիներին Հայաստանի բնությունը ենթարկվեց գազանային հոշոտման: Այդ տարիներին երկրի բոլոր քաղաքները, մանավանդ մայրաքաղաքը, իրենցից ներկայացնում էին էկոադեմիայի դասական օրինակներ: ԽՍՀՄ մասշտաբով քիմիական արդյունաբերության գիգանտների կենտրոնացումը մեր երկրում, առանց անվտանգության, էկոլոգիական ստանդարտների ու նորմերի շահագործումը, մթնոլորտի, հողի գետերի և լճերի համարյա անպատիժ աղտոտումը արդյունաբերական թափոններով, Արարատյան դաշտավայրում ատոմակայանի կառուցումը, Սևանա լճիջրային պաշարների անխնայ ատնումը Հայաստան աշխարհը կանգնեցրել էին էկոլոգիական աղետի շեմին: Անբավարար էկոմիջավայրի ապացույցներ էին բնակչության շրջանում աճող զանազան հիվանդություններ, հատկապես ներվային և օնկոլոգիական, պաթոլոգիական ծնվող երեխաների օրեցօր աճող թիվը և այլն:

Անկախացումից հետո, տնտեսական ճքնաժամի հետևանքով, բնությունը հասցրեց ինչ-որ չափով ինքնամաքրվել, սակայն էներգետիկ ճքնաժամի պատճառով հատվեցին հազարավոր հեկտարներով անտառներ, Սևանի ջուրը էլ

Ավելի անխնա օգտագործվեց: Մի խոսքով մեր օրերում էլ բնօգտագործումը և դրա կառավարումը ոչ լրիվ են օրենսդրորեն իրականացվում: Սակայն մեր երկիրը ունի բավականին օրենքներ, ընդունված այս բնագավառում, սակայն պրոբլեմը, ինչպես միշտ դրանց կիրառմանն է վերաբերում, նորից բուրժուական շահը գերակա է դառնում բնության պահպանության նկատմամբ, Էկոլոգիայի մասին հիշում են վերջին բուրժուարները:

Եվ այսպես, անբաղաճանք բնօգտագործման վերաբերյալ օրենսդրությանը: Նախնառաջ, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է. «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բնական օգտագործումը» (հդ. 10): Եվ հոդված 89. «ՀՀ Կառավարությունը ապահովում է պետական քաղաքականության իրականացումը բնության պահպանության բնագավառում»: ՀՀ Սահմանադրությամբ հստակ սահմանված են պետության իրավագործությունները բնօգտագործման պետական կառավարման ոլորտում: 1991թ. Ընդունված բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներում, հդ.3, բնության օգտագործումը մարդու և բնության փոխհարաբերությունն է, որի ընթացքում բավարարվում են մարդու հոգևոր, ֆիզիկական և նյութական պահանջմունքները: Բնության օգտագործումը թույլատրվում է միայն դրա պահպանության և վերարտադրության ապահովման նպատակով: Սույն օրենքով ՀՀ-ն պատրաստվում է.

- Հանրապետության բոլոր քաղաքացիների համար ապահովել նրանց սոցիալական, գեղագիտական և մշակութային պահանջմունքները բավարարող անվտանգ, առողջ և բարենպաստ բնական պայմաններ,
- Հասնել բնական միջավայրի առավել արդյունավետ օգտագործմանը՝ բացառելով նրա վատթարացումը, մարդկանց առողջության և Էկոլոգիական անվտանգության համար սպառնալիքի առաջացումը,
- Հասնել հավասարակշռության ազգաբնակչության աչի և բնական պաշարների օգտագործման միջև, ապահովել բնության առանձին կամ մի քանի բաղադրիչ մասերի ընդհանուր Էկոլոգիական հաշվեկշիռը:

Իսկ սույն հիմունքներով ՀՀ Կառավարության իրավասության մեջ են մտնում բնապահպանական միջոցառումների մշակումը և իրականացումը, այդ բնագավառում արտաքին հարաբերությունների զարգացումը, բնական պաշարների օգտագործման կարգավորումը, պատմական և մշակութային հուշարձանները պետության պահպանության տակ վերցնելը, Էկոճգնաժամի կանխումը և տարերայի աղետների ու խոշոր վթարների հետևանքների վերացումը: Սույն հիմունքներով բնության պահպանության նկատմամբ պետական հսկողության իրականացումը և բնական պաշարների օգտագործումը կարգավորում է լիազորված պետական մարմինը (այսինքն Բնօգտագործման նախարարությունը): Բնության պահպանության բնագավառում (հդ. 9) տեղական

Ինքնակառավարման մարմինների իրավասության մեջ է մտնում բնապահպանական գերատեսչությունների հետ համաձայնեցնելուց հետո բնության օգտագործման ծավալն ու եղանակները սահմանող պայմանագրի կնքումը, տարածքն օգտագործման հանձնելը, լանդշաֆտների, էկոհամակարգերի և բնության առանձին տարերի պահպանումն ու համապատասխա իրացումը: Սույն հիմունքներով նաև սահմանվում է ձեռնարկությունների, շինությունների և այլ օբյեկտների շահագործմանը ներկայացվող էկոպահանջները (հդ. 15), հողի, ընդերքի, ջրերի, օդի, անտառների, կենդանական աշխարհի պահպանության հիմնական դրույթները: ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (1991թ.) օրենքի խնդիրներն են.

- Բնության չափանիշների (էտալոնի), էկոհամակարգի պահպանությունն ու վերարտադրությունը,
- Բնական հուշարձանների պահպանությունը,
- Կենսաբանական բազմազանության պահպանումը,
- Բնական երևույթների գիտական ուսումնասիրումը,
- Բնական միջավայրի վիճակի հսկողությունը

Ըստ հդ. 4-ի բնության հատուկ տարածքների պետական կադաստրը կազմում է դրանց ծրագրավորումը և պահպանությունն ապահովելու, գիտ. հետազոտությունների, համապատասխան ռեժիմների պահպանման նատմամբ պետ. Հսկողություն իրականացնելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կազման ու արտադրական ուժերի տեղաբաշխման ժամանակ դրանց դերը հաշվի առնելու նպատակով: Սույն օրենքը կարգավորում է նաև պետական արգելոցների (բաժին 3), ազգային պարկերի (բաժին 4), պետական արգելավայրերի (բաժին 5), բնության հուշարձանների (բաժին 6), կարգավիճակն ու պահպանման ռեժիմները:

ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքը (1995թ.) կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի (ծրագրերի, համալիր սխեմաների) գդեցության փորձաքննության, իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Նպատակն է կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել նախատեսվող գորշունեության վնասակարար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական բնականոն զարգացման վրի (հդ. 2): Արգելվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն ենթակա նախատեսվող գործունեության իրականացում առանց դրական փորձաքննական եզրակացության (հդ. 12): Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացվող լիազորված մարմնի կարգավիճակը սահմանում է ՀՀ կառավարությունը (հդ. 16):

Վերը նշված երեք որենքներն էլ բնապահպանական էին: Այժմ ներկայացնենք բնառեսուրսային օրենքները:

ՀՀ հողային օրենսգիրքը (1991թ.) կարգավորում է հողային հարաբերությունները ՀՀ տարածքում և նպատակ ունի ապահովել հողերի գիտականորեն հինավորված արդյունավետ օգտագործում ու բարելավումը և այլն: Սույն օրենքով սահմանվում է հողերի պահպանության նպատակները, խնդիրները և կարգը: ՀՀ ջրային օրենսգրքի (1992թ.) խնդիրներն են՝ բնակչության և տնտեսության կարիքների համար ջրային հարաբերությունների կարգավորումը՝ ջրերի արդյունավետ օգտագործումն ապահովելու, ջրերն աղտոտումից, աղբակալումից և սպառվելուց պահպանելու, ջրերի վրա վնասակարար ներգործությունը կանխելու և վեճացնելու, ջրային օբյեկտների վիճակը բարելավելու նպատակով (հղ. 2): Ջրային հարաբերությունների կարգավորման բնագավառում ՀՀ Կառավարության իրավասությանն են պատկանում ջրերի օգտագործելու, դրանք աղտոտումից պահպանելու, վնասակար ներգործությունը կանխելու կանոնների սահմանումը, ջրերի համալիր օգտագործման ու պահպանության սխեմաների հաստատումը, միջոցառումների պլանավորումը, ջրերի օգտագործման ու պահպանության պետական վերահսկողության և դրա իրականացման կարգի սահմանումը (հղ. 5):

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (1992թ.) խնդիրներն են՝ ընդերքի և նրա օգտագործման շուրջ ծագող հարաբերությունների կարգավորումը, տնտեսական կարիքների բավարարման նպատակով, ընդերքի պահպանության, արդյունավետ և համալիր օգտագործման, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրի ապահովումն և այլն(հղ. 1): Այս բնագավառում ՀՀ կառավարության իրավասությանը ենթակա են ընդերքի պահպանության ծրագրերի մշակումն ու զարգացումը, ընդերքի օգտագործման և պահպանության նկատմամբ պետ. վերահսկողության իրականացումը, ընդերքի օգտագործման և պահպանության տեխնիկական և տեխնոլոգիական չափանիշների մշակումն ու հաստատումը, բնապահպան տարածքներում գտնվող ու համապատասխան նշանակություն ունեցող և հանքավայրերի հետախուզման և օգտագործման, ինչպես նաև ընդերքի օգտագործման արգելքի հատուկ դեպքերի մասին որոշումների ընդունումը (հղ. 5):

ՀՀ անտառային օրենսդրության (1994թ.) Խնդիրներն են՝ անտառի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ, սանիտարահիգիենիկ, առողջարարական և այլ օգտակար բնական հատկությունների պահպանումը, վերարտադրությունը, բազմակողմանի և արդյունավետ օգտագործումը (հղ. 1): Սույն բնագավառում ՀՀ կառավարության իրավասությանն են ենթակա անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում այլ բնապահպանական միջոցառումների հետ համատեղ ծրագրերի մշակումը և դրանց կատարման կազմակերպումը, անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման կարգի սահմանումը, հա

հատման գծով բնափայտի մթերման տարեկան նորմայի հաստատումը, անտառաշինության, պետական անտառային կադաստրի վարման, անտառային ֆոնդի պետական հաշվառման և անտառային մոնիտորինգի կազմակերպումը (հո 6):

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի (1994թ.) խնդիրներն են մթնոլորտային օդի մաքրության և որակի բարելավմանն ապահովումը, մթնոլորտային օդի վիճակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազումն ու կանխումը և այլ:

Ի տրբերություն այլ օրենսդրությունների, օդի պահպանության օրենսդրական կառավարման մեջ ՀՀ Ազգային Ժողովը ունի բացառիկ իրավագործություններ: Դրանք են. Մթնոլորտային օդի պահպանության հիմնական ուղղությունների որոշումը, մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, մթնոլորտային օդի պահպանության պետական վերահսկողությունը և դրա իրականացման կարգի սահմանումը: Այս բնագավառում ՀՀ կառավարության իրավասությանը ենթակա են մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի մշակումը, օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվների սահմանումը, սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի (արտանետումների) նորմատիվների մշակման ու հաստատման կարգի սահմանումը, արտանետումների պետական հաշվառման կարգի սահմանումը, մթնոլորտային օդի վիճակի դիտանցի (մոնիտորինգի) կազմակերպումը, ինչպես նաև այդ բնագավառում պետ. Ստանդարտների մշակումն ու հաստատումը, օդի վրա վնասակար գործունեության վրա պետ. Փորձաքննության կազմակերպումը և իրագործումը, օդի աղտոտման համար վարձի սահմանումը (հո. 5): Ըստ բնապահպանական և բնօգտագործման վիճակների մասին ՀՀ օրենքի (1998թ.) բնապահպանական վճարը՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջեցների գոյացման նպատակով սույն օրենքին համապատասխան պետ. Բյուջե վճարվող պարտադիր վճարն է: Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարների օգտագործողների համար տնտեսվարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետ.բյուջե վճարվող գումարն է (հո. 2):

- 1) Վճարողների հաշվառման կարգը
- 2) Բնապահպանական վճարների դրույքաչափերը
- 3) Բնօգտագործման վճարները սահմանվում են 1-ը և 3-ը՝ կառավարության կողմից, 2-ը՝ օրենքի կողմից:

ՀՀ բուսական աշխարհի մասին օրենքով (1999թ.) ՀՀ կառավարության իրավասություններն են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության օգտագործման և վերարտադրության պետական քաղաքականության իրականացում, այդ բնագավառում պետական ծրագրերի ներկայացում ԱԺ հաստատմանը, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և օգտագործման կարգի սահմանում, մոնիտորինգի կազմակերպման իրականացման, բուսական աշխարհի կադաստրի վարման կարգի սահմանում, բույսի Կարմիր գրքի հաստատում և այլն(հդ. 5):Սույն օրենքով լիազորված պետական մարմնի իրավասություններն են պետ ծրագրերի մշակումը, բուսական աշխարհի պետական հաշվառման կազմակերպումը և իրացումը, բուսական պաշարների օգտագործման նորմատիվների, կանոնների հաստատումը, լիցենզիաների տրամադրումը, պետական վերահսկողության իրականացումը, մոնիտորինգի կազմակերպումը, բուսական աշխարհի կադաստրի վարումը և այլն:

ՀՀ կենդանական աշխարհի մասին (2000թ.) օրենքով ՀՀ կառավարության իրավասություններն են կենդանական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության օգտագործման և վերարտադրության բնագավառում պետ. (ծրագրերի) քաղաքականության իրականացման ապահովումը, պետ. ծրագրերի ներկայացումն Ազգյին Ժողովի հաստատմանը, կենդանական աշխարհի օբյեկտների պահպանության, պաշտպանության օգտագործման կարգի սահմանում, վճարների գանձման կարգի սահմանում, մոնիտորինգի կազմակերպումը և այլն(հդ. 5): Սույն բնագավառում լիազորված պետական մարմնի իրավասություններն են պետ. ծրագրերի մշակումը, կենդանական աշխարհի վպետական հաշվառման կազմակերպումն ու իրականացումը կադաստրի վարումը, մոնիտորինգի իրականացումը, պետ. վերահսկողության իրականացումը, կենդանական պաշարների օգտագործման նորմատիվների հաստատումն և այլն:

Վերը նշված օրենքներով տեղական իշխանությունները և տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են աջակցություն և օժանդակություն ՀՀ կառավարությանը և համապատասխան լիազոր մարմիններին:

ՀՀ բնական նորմեր պարունակող այլ օրենքներից են 1992թ ՀՀ օրենքը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին, ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին (1996թ), ՀՀ էներգետիկայի մասին օրենքը (1997թ), ՀՀ քաղաքաշինության մասին օրենքը (1998թ), արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին ՀՀ օրենքը(1998թ), խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին ՀՀ օրենքը (1998թ) և այլն: Նորմ-երաշիքներ են սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (1985թ), ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (1998թ), ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքով (1998թ), ՀՀ քրեական օրենսգրքով (2003թ), ՀՀ աշխատանքային օրենսգրքով (1972թ):

Ենթաօրենսդրական ակտերից են ՀՀ կառավարության որոշումը « Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործողությունների սահմանային չափերի մասին », «Բնապահպանության և բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակներ սահմանելու մասին», «ՀՀ վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին», «Բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի աղտոտման համար վարձի վճարումների վերահսկողության վ կարգի մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների նկատմամբ վերահսկողության իրականացման կարգի մասին » և այլն: Բնապահպանական և բնօգտագործման բնագավառում ենթաօրենսդրական ակտերից են նաև «Բողոքարար պետական արգելոցիկանոնադրությունը » «Սևանա» Ազգային զբոսայգի ստեղծելու մասին ՀՀ նախարարի խորհրդի որոշումը և այլն»:

Հայաստանն զբաղեցնում է 29,74 հազար քառակուսի կիլոմետր տարածք: Հայաստանի ընդերքում կարելի է գտնել գործնականում բոլոր լեռնային ապարները, որոնք առաջացել են Հայկական լեռնաշխառում: Հանրապետության տարածքում երկաթ, պղիինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, տուֆ, մարմար, կիր և այլն հարստություններ կարող ենք տեսնել: Հայաստանը հարուստ է նաև կիսաթանկարժեք քարերով և բազմաթիվ հանքային աղբյուրներով (Ջերմուկ, Դիլիջան, Բջնի, Սևան, Արզնի):

Բուսական և կենդանական աշխարհի հատկապես արժեքավոր տեսակների օահպանության համար ստեղծված են 5 արգելոց, 22 արգելավայր և մեկ ազգային պարկ:

Զարգացնում է քիմիական, մեքենաշինական թեթև լեռնամետալուրգիական արդյունաբերությունը: Հենց արդյունաբերական ձեռնարկություններն ու ավտոտրանսպորտն են հանդիսանում շրջական միջավայրի հիմնական աղտոտողները:

Կենսագործունեության համար կարևոր բնական բաղադրիչներ և էկոհոմոկորգերի տեխնոգեն աղտոտումը հանգեցրել են Հայաստանում էկոլոգիական լարվածության սրմանը: Այսօր շատ կարևոր է էկոլոգիապես մաքուր սնունդ օգտագործելը:

Բնության պահպանման համար ստեղծված բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ և լաբարատորիաներ, որոնք ուսումնասիրում են բնության պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրները:

Բնության պահպանության հարցերը առանձնապես սրությամբ են դրվում Հայկական պայմաններում:

Մեր հանրապետության բնական լանդշաֆտները արագորեն անհետանում են, իրենց տեղը զիջելով կուլտուրական լանդշաֆտներին: Եվ դեռ 1921թ. Հայաստանում հրապարակվեցին դեկրետներ անտառների, հողերի, ջրերի և վայրի դեղաբույսերի պետական մենաշնորհի վերաբերյալ: Հետագա տարիներում էլ Հայաստանը բազմաթիվ որոշումներ և օրենքներ է ընդունել բնության պահպանության մասին: 1958թ. առաջին անգամ ընդունվեց « Բնության պահպանման մասին » օրենքը: Այս օրենքի հիման վրա, հանրապետության տարածքում պետական պահպանության տակ են առնվում հողերը, անտառները, ջրային ռեսուրսները, բնության հուշարձանները, ճանաչողական մեծ արժեք ներկայացնող բնության առանձին անկյունները, հանգստի և տուրիզմի ռեսուրսները և այլն:

« Բնության պահպանման մասին » օրենքը շատ բանում նպաստել է մեր հանրապետության բնական ռեսուրսների պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը:

ՀՀ-ը ունի բազմաթիվ հարստություններ բնության մեջ, որոնց պահպանումը ևս հարստություն է ներկայացնում հետագա կյանքը շարունակելու համար:

Վերցնենք օրինակ՝ ցամաք սարերի մեջ Սևանի նման լիճ ունենալը:

Վերջին տաս տարիների ընթացքում լճում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ: Ջրատարերի կառուցելուց հետո և ձկնագործության հետևանքով լիճը ունի սարսափելի տեսք: Այսինքն այսպես շարունակելու դեպքում մոտ ապագայում կունենանք մի մեծ ճահիճ Սևանի փոխարեն:

Այսօր մեր իշխան ձուկը մեծ հարստություն է մեր համար, այն նաև մեծ դեր է կատարում տնտեսության զարգացման մեջ: Սակայն մենք չենք կարողանում հասկանալ մի բան, որ այն կամաց-կամաց ոչնչանում է դառնալով շուկայական համակարգում մեծ հարստություն:

Իսկ Սևանի ձուրը օրեցօր պակասում է ջրատարերի կառուցվելուց հետո: Ճիշտ է այն հանդիսանում է էներգիայի ստացման մի ձև, սակայն ոչնչանում է մեր ազգային հարստությունը: Այս հարցի շուրջ տարվում են շատ բանկացություններ և տարաձայնություններ: Այն մտնում է բնապահպանության հարցերից մեկի մեջ:

Կամ վերցնենք մեկ այլ օրինակ:

Մեր գեղատեսիլ անտառների ոչնչացումը: Այսօր << անտառ>> հասկացությունը մեզ համար դարձել է << մութ անտառ>>, որտեղ չի հասկացվում նրա պահպանության օրենքը: Շրջելով մեր անտառները, բացի << տկլոր>> տարածություններից ուրիշ ոչինչ չենք կարող տեսնել: Ցավալին հենց դա է: Մենք այսօր միայն մտածում ենք մեր այսօրվա մասին: Իսկ վաղը: Ինչ է լինելու վաղը: Ինչպես ասել ենք անտառները մեծ դեր են խաղում մեր կյանքի համար: Պահպանում են մաքուր օդը, գեղեցկացնում են մեզ շրջապատող վայրերը: Մենք պետք է և պարտական ենք այն պահպանել, որպեսզի վաղվա մեր սերունդը կարողանա գոյատևի և պարծենա մեր արժանիքներով և հարստություններով:

Եզրակացություն

Մենք այսօր խոսում ենք բնության պահպանման մասին, սակայն մոռանում ենք խոսել մեր փողոցների վիճակի մասին: Քաղաքը վերածվել է մի մեծ աղբարկղի, որը և հանդիսանում է բնության աղտոտումը: Մակայն պետք է մի բան հասկանանք, որ քաղաքը մաքուր պահելու առաջին քայլը չպետք է լինի մաքրելը, այլ պետք է լինի չաղտոտելը:

Բնության պահպանության շահերը, մարդկության շահերը պահանջում են, որպեսզի մարդը գիտական մոտեցում, ամենօրյա հոգատարություն հանդես բերի բնության նկատմամբ, կշռադատի իրաամեն մի քայլը, որպեսզի ոչ այսօրվա, ոչ էլ ապագա սերունդները չգրկվեն բնության հրաշալիքներից, լիովին վայելեն նրա բարիքները:

Բնությունը պահպանել, նշանակում է պահպանել մարդու գոյությունը, մեր մոլորակի վրա ստեղծել առողջության համար բարենպաստ պայմաններ, երաշխավորել մեր ու եկող սերունդների ներկան ու ապագան:

Բնության պահպանման համար ստեղծված օրենքները մեր հասարակությունը չպետք է անտեսի, այլ պետք է ի նկատի ունենա իր ողջ կյանքի ընթացքում:

Գրականություն

1. Է. Մ. Հայրապետյան, Լ. Վ. Հարությունյան- Բնության պահպանության հիմունքներ
2. Խ. Միրիմյան-Բնության պահպանության հիմնական խնդիրները
3. Հայաստանի Էկոլոգիական հիմնախնդիրների այբուեն
4. Ջ. Խ. Աթայան – Հայկական բնությունը և նրա պահպանությունը
5. Հանրագիտարան

